

Աստղիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
Լուսիկ ՀՈՎԱԿԻՍՅԱՆ  
Երևանի պետական համալսարան

ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴԱՄԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ ԲՈՒՀՈՒՄ

*Հողվածում քննարկվում են բուհերի տնտեսագիտության ֆակուլտետներում դասավանդվող «Գործարարական անգլերեն» դասընթացի ուսուցման հայեցակետերը՝ դիտարկելով այն «Անգլերենը հատուկ նպատակների համար» մոտեցման սկզբունքների շրջանակներում: Նկարագրվում են դասընթացի տարբերակիչ առանձնահատկությունները, որոնք միտված են ապագա մասնագետների թե՛ ակադեմիական հմտությունների զարգացմանը և թե՛ գործարար-մասնագիտական ոլորտում հաղորդակցական կարողությունների ձևավորմանը:*

**Բանալի բառեր.** *անգլերենը հատուկ նպատակների համար /ԱՀՆ/, գործարարական անգլերեն, մասնագիտական բառապաշար, հաղորդակցական հմտություններ, կարողություն, գործարարական լեզվի կիրառական քերականություն*

Համաշխարհային ինտեգրման և հատկապես միասնական եվրոպական կրթական տարածքի ստեղծման արդի պայմաններում օտար լեզուներին տիրապետելը բարձրագույն ուսումնական հաստատության շրջանավարտի ընդհանուր կարողության անբաժանելի մաս է համարվում: Ժամանակակից մասնագետին ներկայացվող պահանջներից մեկն էլ դարձել է որևէ օտար լեզվին տիրապետելու միջին և միջինից բարձր մակարդակը, ինչը թույլ կտա մասնագիտական գործունեության ոլորտում անմիջական շփում իրականացնել օտարերկրացի գործընկերների հետ՝ այդպիսով կայացնելով և կատարելագործելով մասնագիտական իմացության որակն ու արդյունավետությունը: Օտար լեզուների դերի և նշանակության աճի պայմաններում և հետխորհրդային կրթության ոլորտի համընդհանուր փոխակերպման փուլում կարևորվում է բուհական տարբեր մասնագիտությունների կրթական ծրագրերի շարունակական վերանայումը և լրամշակումը, ընդ որում խոսքը գնում է ոչ թե որոշ կարողությունների ձևավորման մասին առարկայի շրջանակներում, այլ բոլոր առարկաների նոր դերի մասին՝ ուղղված անհատի մասնագիտական ձևավորմանը /Крупченко, Кузнецов, 2015/:

Այս առումով անգլերենի դասավանդումը բարձրագույն ուսումնական մակարդակում նույնպես նկատելի փոփոխությունների և մշակման անհրաժեշտություն է ենթադրում, ինչը կնշանակի, որ հարկ է վերանայել հատուկ մասնագիտական նպատակների համար անգլերենի առկա դասընթացների ծրագրային փաթեթները թե՛ ուսուցանվող նյութի ընտրության և թե՛ այդ նյութի դասակարգման տեսանկյունից: ԱՀՆ-ի (Անգլերենը հատուկ նպատակների համար) կատարագույն բաղադրիչ հանդիսացող դասընթացներից է *գործարարական անգլերենը*, որը վերջին տասնամյակների ընթացքում ինքնուրույն

ձևավորվող ենթալեզվի կարգավիճակ է ձեռք բերել: Այս դասընթացի լսարանը ավելի քան համընդգրկուն է, իմաստով, որ այն չի սահմանափակվում բուհական ուսումնառության գործընթացով:

Նախկինում բուհերի հասարակագիտական (բացառությամբ՝ օտար լեզուների) և բնագիտական ֆակուլտետներում *Ընդհանուր անգլերենի* (General English) դասավանդմանը փոխարինելու է եկել *Անգլերենը հատուկ նպատակների համար* (ESP) մոտեցմամբ ուսուցանումը, որը հիմնված է անգլերեն ուսումնասիրողների ապագա մասնագիտության յուրահատկություններով պայմանավորված պահանջմունքների վրա և միտված է ուսանողների ինչպես ակադեմիական կարողությունների ձևավորմանը, այնպես էլ մասնագիտական իրազեկության զարգացմանը: ԱՀՆ դասավանդումն արդարացված է նախևառաջ այն պատճառով, որ այն խթանում է ուսանողների հետաքրքրվածությունը՝ մասնագիտական ոլորտից ընտրված նյութերի արդիականությամբ և կիրառելիությամբ, մատուցվող նյութի բազմազանությամբ, հաղորդակցական հմտությունների մշակման առանձնահատուկ շեշտադրությամբ: Ընդհանուր անգլերենի շրջանակներում վաղուց ի վեր դասավանդվում է *մասնագիտական լեզու* բաղադրիչը, սակայն վերջինս պետք է հստակ տարբերել ԱՀՆ մաս կազմող *Անգլերենը մասնագիտական նպատակների համար* դասընթաց-բաղադրիչից, որն ավելի լայն է իր ընդգրկմամբ, նպատակներով, մեթոդներով և ունի ընդգծված հաղորդակցական-կիրառական ուղղվածություն: ԱՀՆ դասավանդման մեջ իր տեղն ունի *գործարարական անգլերենը*, որն առանձնանում է որպես ուրույն ուսումնասիրության առարկա բովանդակային և մեթոդական առումներով: Գործարարական անգլերենը իր մեջ ներառում է թե՛ տնտեսագիտության և գործարարության լեզուն՝ իր բոլոր բաղադրիչներով հանդերձ, և թե՛ անգլերենի հանրային հաղորդակցական հմտությունների համապարփակ ամբողջությունը: Գործարարական անգլերենի ուսուցման ժամանակակից ուղղությունները հենվում են լեզվի հաղորդակցական հմտությունների մշակման վրա՝ հիմք ընդունելով գործարար միջավայրում շրջանառվող խոսքային կաղապարների ուսուցանումը /Ellis, Johnson, 2005/:

Գործարարական անգլերենը որպես դասընթաց ներառում է երկու միմյանց լրացնող կարևորագույն բաղադրիչ. տնտեսագիտության անգլերենի ներքին լեզվական առանձնահատկությունները և գործարար հաղորդակցության լեզուն՝ իր ենթակառուցվածքային բաղադրիչներով հանդերձ: Դասընթացի կառուցվածքում ընդգրկված է գործարարական անգլերենի ընդհանրական դրույթների ուսուցանումը: Վերջինս ենթադրում է թե՛ ընդհանուր և նեղ-մասնագիտական (դասախոսի հայեցողությամբ ընտրված) և թե՛ դասագրքային բնագիր տեքստերի ընթերցանական հմտությունների մշակում, բազմաբնույթ բանավոր զեկույցների և գրույցների ունկնդրում՝ հաջորդվող լսարանային քննարկումներով, որոնք զուգահեռաբար ուղղորդվում են տերմինաբանական բառապաշարային ֆոնդի մշակմամբ և հարստացմամբ: Քանզի տնտեսագետ-ուսանողի առաջնահերթ խնդիրն է տիրապետել գործարար

հաղորդակցության հմտություններին, ապա դասընթացի կարևորագույն մաս է կազմում գրավոր հաշվետվությունների, առևտրային նամակագրության, ընթացիկ աշխատանքային գրագրության ուսուցանումը, բանակցությունների խոսքային տեխնիկայի և բանավոր զեկույցների վարպետացումը, հանրային փոխշփումների մշակույթի ուսուցանումը: Ընդ որում, հաշվի է առնվում ինչպես միջմշակութային, այնպես էլ ներմշակութային համատեքստը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև զբաղվածության փաստաթղթերի (օր. ռեզյումե, դիմում-նամակ) ձևակերպման լեզվի և աշխատանքային հարցազրույցներին պատրաստվելու ռազմավարությունների ուսուցանումը: Այսպիսով, գործարարական անգլերենի ուսուցման առանցքային հայեցակետը լեզվի գործնական կիրառության ուսուցանումն է, որը հետապնդում է հեռահար նպատակներ, այն է՝ աշխատաշուկայում ուսանողի (երիտասարդ մասնագետի) մրցունակության ապահովում, ինչպես նաև անձնային և մասնագիտական աճի խթանում:

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրիատի կրթական ծրագրի մաս է կազմում «Օտար լեզու» /Անգլերեն/ առարկան, որի շրջանակներում ուսուցանվում է *Գործարարական անգլերեն* դասընթացը՝ երկու տարի, երկու փուլով: Առաջին (երեք կիսամյակ) և երկրորդ (մեկ կիսամյակ) փուլերում ուսուցանվում են «Անգլերենը ընդհանուր ակադեմիական և գործարար նպատակների համար» (English for Academic and General Business Purposes) և «Գործավարություն անգլերեն լեզվով» ենթադասընթացները համապատասխանաբար: Վերջինս առավել նպատակահարմար կլիներ վերանվանել «Գործարար հաղորդակցության անգլերեն» (English for Business Communication):

Բակալավրիատի ծրագիրը նախատեսում է ընդհանուր լեզվական հմտությունների ամրակայում, որը թույլ կտա ուսանողին տիրապետել տնտեսագիտական նյութի ընթերցմանը և լիարժեք ընկալմանը: Եթե առաջին փուլում շեշտը դրվում է առավելապես ռեցեպտիվ/ըմբռնողական (ընթերցել և ունկնդրել-ընկալել) հմտությունների զարգացման վրա, ապա երկրորդ փուլը ենթադրում է պրոդուկտիվ/ստեղծարար (խոսել և գրել) հմտությունների մշակում և ամրապնդում: Երկամյա դասընթացի ավարտին ուսանողից ակնկալվում է ցուցաբերել գիտելիքներ և հմտություններ խոսքային գործունեության տարբեր դրսևորումներում: Ստորև ներկայացվում է հմտություններից յուրաքանչյուրի բնութագիրը.

- Ընթերցում. ուսանողը պետք է կարողանա ընթերցել և հասկանալ զանազան աղբյուրներից քաղված մասնագիտական բազմաբնույթ տեքստեր՝ ցուցաբերելով մասնագիտական բառապաշարի և ժանրային առանձնահատկությունների իմացություն, ինչպես նաև տեքստի հետ աշխատելու ունակություն:

- Բանավոր խոսքի ընկալում. ուսանողը պետք է կարողանա լսելով ընկալել և հասկանալ բանավոր խոսքը կիրառելով լսելու տարբեր ռազմավարություններ՝ նպատակին/խնդրին համապատասխան (օր. ընդհանուր

բովանդակությունը կամ կոնկրետ տեղեկատվությունը հասկանալու համար), ինչպես մասնագիտական, այնպես էլ հաղորդակցական զանազան ոլորտներում:

- Բանավոր խոսք. ուսանողը պետք է կարողանա ինքնուրույն ձևավորել և արտահայտել մտքեր մասնագիտական թեմաներով գրույց վարելիս, հանդես գա գեկույցներով, բանակցի մասնագիտական և տեխնիկական հարցերի շուրջ՝ հաշվի առնելով հաղորդակցական նպատակներին հասնելու ռազմավարությունների դիսկուրսիվ ամբողջությունը:

- Գրավոր խոսք. ուսանողը պետք է կարողանա պատշաճ լեզվական ձևակերպումներով կազմել գործնական փաստաթղթեր՝ նկատի առնելով տրված հաղորդակցական խնդիրը (օր.՝ հարցնել, առաջարկել, ընդունել, մերժել, հաղորդել, նկարագրել, դատողություն անել և այլն), ինչպես նաև կարողանա կատարել անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն մասնագիտական տեքստերի ամփոփ վերարտադրություն/թարգմանություն:

Մագիստրոսական ծրագիրը ներառում է նեղ-մասնագիտական նյութերի գործարկում: Նյութի ընտրությունը պայմանավորված է մագիստրոսական խմբի մասնագիտական կողմնորոշմամբ:

Դասընթացի ծրագիրը իր բնույթով գործառնության է և կառուցված է գործարար հաղորդակցական գործառնությունների լեզվական դրսևորումների ամբողջական կադապարի հիման վրա /Breen, 2002/: Այդ գործառնությունների շարքին են դասվում գործարար հանդիպումների և բանակցությունների խոսքային մշակույթը, ինչպես նաև բանավոր գեկույցների տեխնիկան, հեռահաղորդակցության գործառնությունը և այլն: Գործարարական լեզվի գործառնություններով պայմանավորված խոսքային հմտությունների ուսուցանումը ենթադրում է գործարար աշխարհի այնպիսի կարևորագույն բնագավառների և երևույթների քննարկում, ինչպիսիք են տնտեսական տեղաշարժերը և առևտրային ուղղությունները, ապրանքը, արտադրական գործընթացները և ընթացակարգերը, տնտեսվար ռազմավարությունը, ֆինանսա-հաշվապահական հաշվառումը, մարդկային ռեսուրսների կառավարումը և այլն: Վերոհիշյալ քննարկումների ընթացքում ուսումնասիրվում և գործարկվում են քննարկվող նյութի համատեքստով պայմանավորված լեզվական գործառնությունները: Այս գործառնությունների ուսուցանումը իրականացվում է գործարարական լեզվի կիրառական քերականության (business grammar) ուսումնասիրմամբ: ԱՀՆ-ի շրջանակներում լեզվի դասավանդման այս հարաբերականորեն նոր մոտեցումը թույլ է տալիս զարգացնել այնպիսի լեզվական հնարքների իմացությունը, ինչպիսիք են իմաստային շաղկապումները, համեմատությունը և հակադրությունը, պատճառի և հետևանքի ձևակերպումը դատողության մեջ, համաձայնության և անհամաձայնության արտահայտչաձևերը:

Դասընթացի ծրագիրը իրականացվում է թե՛ հրատարակված դասագրքերի և թե՛ զանազան աղբյուրներից հավաքագրված արդիական նյութերի (ներառյալ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները) մշակումներով: Դասընթացի ավարտին ուսանողներից ակնկալվում է գործարարական

անգլերենի լեզվական հմտությունների (ընթերցանական նյութի ըմբռնում և վերարտադրություն, ունկնդրում և ըմբռնում, գործարար և հանրային իրավիճակներում՝ խոսք, գործարար գրագրության իմացություն) տիրապետումը, ինչպես նաև՝ տնտեսագիտության հիմնարար տերմինապաշարի իմացությունը:

Նեղ-մասնագիտական կամ ոլորտային լեզվի (domain-specific language) համար խիստ հատկանշական և առանձնահատուկ տարբերակումները, որոնք փոփոխուն են և անվերջ համալրվող, պարտադրում են գործարար հաղորդակցության լեզվի ուսումնասիրությունը դարձնել առավել ճկուն և համադրելի մասնագիտական դաշտում առկա հարափոփոխ մոտեցումներին: Կարելի է հետևություն անել այն մասին, որ սույն հանգամանքով է պայմանավորված *Գործարարական անգլերեն* դասընթացի ծրագրային հայեցակարգի անընդմեջ մշակումն ու համալրումը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Крупченко А.К., Кузнецов А.Н. Основы профессиональной лингводидактики. М.: АПКИППРО, 2015.
2. Breen M.P. Syllabus design // *The Cambridge Guide to Teaching English to Speakers of Other Languages*. Cambridge: Cambridge University Press, 2002.
3. Donna S. Teach Business English. Cambridge: Cambridge University Press, 2000.
4. Dudley-Evans T., St. John M. J. Developments in English for Specific Purposes: A Multi-Disciplinary Approach. Cambridge: Cambridge University Press, 1998.
5. Dudley-Evans T. English for Specific Purposes // *The Cambridge Guide to Teaching English to Speakers of Other Languages*. Cambridge: Cambridge University Press, 2002.
6. Ellis M., Johnson C. Teaching Business English. Oxford: Oxford University Press, 2005.
7. Frendo E. How to Teach Business English. Harlow: Pearson Education Ltd, 2009.
8. Hutchinson T., Waters A. English for Specific Purposes. Cambridge: Cambridge University Press, 2006.
9. Johns A.M., Price-Machado D. English for Specific Purposes (ESP): Tailoring Courses to Student Needs – and to the Outside World // M. Celce-Murcia (ed.) *Teaching English as a Second or Foreign Language*. Boston, MA: Heinle & Heinle, 2001.
10. Long M. Second Language Needs Analysis. Cambridge: Cambridge University Press, 2005.

11. Robinson P. ESP Today: A Practitioner's Guide. London: Prentice Hall, 1991.
12. Swales J. M., Feak C. S. Academic Writing for Graduate Students (2<sup>nd</sup> ed.). Ann Arbor: University of Michigan Press, 2012.

**А. ОГАНЕСЯН, Л. ОВАКИМЯН** – *Аспекты преподавания делового английского в ВУЗЕ.* – В статье рассматриваются аспекты преподавания курса «Деловой английский» в рамках подхода английского для специальных целей в системе высшего образования на современном этапе. В статье обозначены отличительные особенности курса, которые направлены на развитие академических навыков будущих специалистов и формирование профессионально-ориентированных коммуникативных компетенций.

**Ключевые слова:** английский для специальных целей (АСЦ), деловой английский, профессиональная лексика, коммуникативные навыки, компетенция, грамматика делового английского

**A. HOVHANNISYAN, L. HOVAKIMYAN** – *On Some Aspects of Teaching Business English in Higher Education.* – The paper discusses some aspects of teaching the course of Business English in the framework of necessary changes to foreign language teaching practices in higher education. The concept of Business English teaching is viewed within the English for Specific Purposes (ESP) approach. The specific features of the course are described with regard to both developing academic skills and shaping professional business communication competencies of the future specialists.

**Key words:** English for Specific Purposes (ESP), Business English, professional vocabulary, communication skills, competence, business grammar